Հայտարարություն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ
Դրամաշնորհ No. TF016980

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «Հայաստանում Երիտասարդների ներգրավվածության խթանման» դրամաշնորհային ծրագրի /ԵՆԽԾ/շրջանակում **«Սոցիալական հարցերով մասնագետ»** հանձնարարականի իրականացման համար խորհրդատու ընտրելու նպատակով հայտարարվում է անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

Այս հանձնարարականի հիմնական նպատակն է մասնագիտական ու մեթոդական օգնություն ցուցաբերել ծրագրի բոլոր աշխատանքների իրականացմանը՝ երաշխավորելով երիտասարդների սոցիալական ներգրավման ու սոցիալական կայունության ապահովման հարցերի լիարժեք դիտարկումը՝ առավելագույնի հասցնելու համար դրանց դրական սոցիալական ազդեցությունները եւ կանխելու՝ անցանկալի սոցիալական հետևանքները:

Խորհրդատուն պետք է իրականացնի հետեւյալ առաջադրանքները՝

- մասնագիտական աջակցություն ցուցաբերի Ծրագրի համակարգողին եւ տեղական համակարգողներին ծրագրային միջոցառումների նախագծման եւ իրականացման հարցերում,
- վերահսկի գենդերային զգայունությանն առնչվող խնդիրներին տրվող լուծումները, ծրագրում սոցիալապես խոցելի խմբերի եւ շահագրգիռ կողմերի արդյունավետ ներգրավման ու սոցիալական վերլուծություններին առնչվող գործողություններն ու քաղաքականությունները,
- ցուցաբերի մեթոդական աջակցություն ԵՆԽԾ-ի շահառու կառույցներին՝ Ծրագրի շրջանակներում տեխնիկական հանձնարարականների մշակման գործում,
- մասնակցի Ծրագրի շրջանակներում դրամաշնորհների տրամադրման Գործառնական ձեռնարկների՝ համապատասխան սոցիալական հատվածների մշակման եւ լրամշակման աշխատանքներին,
- ըստ անհրաժեշտության աջակցի հանձնարարված ծառայությունների գնման նախնական արժեքների հստակեցման աշխատանքներին,
- աջակցի Ծրագրի տեղական համակարգողներին՝ ծրագրային միջոցառումների իրականացման հետ կապված խորհրդակցությունների պատրաստման ու անցկացման հարցերում,
- աջակցի ծրագրի բոլոր խորհրդատուներին եւ գործընկերներին՝ ծրագրային միջոցառումների իրականացման ընթացքում սոցիալական ոլորտի լավ փորձը կիրառելու գործում,
- մասնակցի ԵՆԽԾ-ի ենթածրագրերի վերաբերյալ առաջարկների ներկայացման եւ գնահատման ձեւերի ու ընթացակարգերի մշակման աշխատանքներին,
- մասնակցի Ծրագրի շրջանակներում սոցիալական ուղղվածության ենթածրագրերի (միջոցառումների) իրականացման համար հայտարարված մրցույթների, ենթադրամաշնորհային ծրագրային հայտերի գնահատմանը, ներկայացնի փորձագիտական եզրակացություններ ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ,
- աջակցի ծրագրի սոցիալական ազդեցությունների մոնիթորինգին և գնահատմանը,
- կատարի Ծրագրի համակարգողի՝ իր մասնագիտական պատասխանատվության հարցերին առնչվող այլ հանձնարարություններ:

Ծառայությունները նախատեսվում է իրականացնել 2015թ. հունիսից-2016թ. մարտ ամիսների ընթացքում:

Խորհրդատուն պետք է բավարարի հետեւյալ որակավորման չափանիշներին եւ պետք է ունենա՝

- բարձրագույն մասնագիտական կրթություն սոցիալական ոլորտում (նախընտրելի է սոցիոլոգիայի, սոցիալական գիտությունների կամ սոցիալական աշխատանքի և հարակից այլ բնագավառներում) կամ բարձրագույն կրթություն եւ սոցիալական պաշտպանության ոլորտում երկարամյա եւ ծանրակշիռ աշխատանքային փորձ,
- սոցիալական պաշտպանության ոլորտում, մասնավորապես, զբաղվածության, երիտասարդների ներգրավման եւ այլ հարակից ենթաոլորտներում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ (պետական կառավարման եւ ոչ կառավարչական կազմակերպություններում աշխատանքի փորձը կդիտվի որպես առավելություն),
- միջազգային կազմակերպությունների հետ աշխատելու փորձ,
- երիտասարդների հետ աշխատելու ծանրակշիռ փորձ, խոցելի խմբերի երիտասարդների հետ աշխատելու փորձը կդիտվի որպես առավելություն,
- համապատասխան սոցիալական ոլորտների, այդ թվում՝ երիտասարդական քաղաքականության անհրաժեշտ իմացություն,
- սոցիալական վերլուծությունների, այդ թվում՝ որակական հետազոտական մեթոդաբանությունների մշակման եւ անցկացման փորձ,
- սոցիալական պաշտպանության ոլորտի տարբեր ենթաոլորտների հիմնախնդիրների վերլուծության կարողություն, ռազմավարական պլանավորման գիտելիքներ, ռազմավարական փաստաթղթերի մշակման փորձ,
- կազմակերպչական եւ հաղորդակցական անհրաժեշտ հմտություններ,
- հայերենի գերազանց իմացություն (անգլերենի սահուն իմացությունը խիստ ցանկալի է): (Ակնկալվում է, որ ընտրված թեկնածուն պետք է կարողանա անգլերենով վարել գործեր եւ անգլերենով մշակել զեկույցներ),
- համակարգչային գիտելիքներ:

Մեծապես խրախուսվում է որակավորված երիտասարդ դիմորդների (30 տարեկան եւ ցածր) մասնակցությունը:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող անհատ խորհրդատուները կարող են մինչեւ **2015թ. հունիսի 9-ը** ներկայացնել հետաքրքրվածության գրություն եւ կենսագրական թերթիկ ստորեւ նշված հասցեով՝ նշելով ծրագրի անվանումը եւ այն պաշտոնը, որին դիմում եք:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
<< Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն >> պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Էդգար Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի պողոտա 4, 3-րդ հարկ
Հեռախոս. (037411) 910 581, 910 590
Էլ. փոստ. info@ffpmc.am